

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

գ. Նոր Արտագերս

04.08.2020թ.

Հարգելի համայնքի բնակիչներ, հյուրեր, այսօր Ձեր ներկայությամբ քննարկման կներկայացնեն Նոր Արտագերսի համայնքապետի, ավագանու և համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը կատարած աշխատանքները:

Համայնքապետարանը՝ համայնքի ղեկավարը իր գործունեությունն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն և իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:

Նոր Արտագերսի համայնքն իրենից ներկայացնում է 640 առանձին տնտեսություն, որի բնակչության թիվը կազմում է 1645 մարդ, ընտրողների թիվը կազմում է 1246, վարչական տարածքը կազմում է ընդամենը 674,5 հա, որից գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ 589.3հա: 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մշակվել է 452.7հա:

Համայնքում հիմնականում զբաղվում են բոստան- բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ և խաղողագործությամբ, ինչպես նաև պտղաբուծությամբ:

ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ՝

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները: Գույքահարկի գանձումը առաջին կիսամյակի կտրվածքով նախատեսվել է 2650.0 հազար դրամ, փաստացի կատարվել է 559.0 հազար դրամ, ընդամենը – 21.1% : Հողի հարկի առաջին կիսամյակի կտրվածքով նախատեսված 4000.0 հազար դրամ, կատարվել է 455.6 հազար դրամ, ընդամենը-11.4 %-ով:

Պլանով նախատեսված այլ եկամուտները- 1860.0 հազար դրամ, փաստացի կատարվել է 433.8 հազար դրամ, ընդամենը 23.3%- ով: Պետության կողմից ստացված դոտացիան առաջին կիսամյակի կտրվածքով նախատեսվել է 13345.7 հազար դրամ, փաստացի կատարվել է 13657.0 հազար դրամ, ընդամենը – 102.3%, ընդամենը եկամուտների կատարողականը 2020 թվականի առաջին կիսամյակի դրությամբ կազմում 15105.9 հազար դրամ կամ կատարվել է 66.9%:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այս բնագավառում համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

1. կազմակերպում և կառավարում է համայնքի ենթակայության «ԲԱ» ՀՈԱԿ-ի, գրադարանի գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները,
2. տրամադրում է դրամաշնորհներ համայնքում գործող նախակրթարանին:
3. կատարվում է մանկապարտեզի համար շենքի բարեկարգում, նախատեսվում է 2020թ. ընթացքում հանձնել շահագործման:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեկավարը պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1. կազմակերպվել է համայնքում զինապարտի հասակի երիտասարդների հավաքագրում տարեկան զորահավաքին,
2. Իրականացվել է շաբաթօրյակ համայնքի վարչական տարածքում
3. 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքում մահացածների շիրիմների համար գնել է ծաղկեպսակներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները, և իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը.

1. նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքները
2. միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեակավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. կատարում է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործում, դրանց շինարարություն և վերանորոգում:
2. կատարում է համայնքի տարածքում ընտանի կենդանիների և թռչունների ամենամյա հաշվառում
3. կազմակերպում է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն, հակահամաճարակային միջոցառումներ՝ կենդանիների հիվանդությունների կանխման, և այլ աշխատանքներ,
4. աջակցել է գյուղ. մթերքների աշխատանքների իրականացմանը, աջակցել են, որպեսզի բնակիչները իրենց իսկ հավաքած բերքը իրացնեն թե շուկաներում և թե իրացման կետերում և գործարաններում,
5. հաշվառել, և վիճակագրական վարչություն է ներկայացրել կիսամյակային հաշվետվությունը:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեակավարը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. կազմակերպել է կենտրոնական ճանապարհների և կից առուների մաքրում,
2. ամենամյա կտրվածքով կազմակերպում է աղբաթափման աշխատանքներ,
3. բարեկարգվել է համայնքի դաշտամիջյան ճանապարհները / հարթեցում, ավազապատում/ և այլ գյուղամիջյան փողոցներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Համայնքի ղեակավարը սույն բնագավառներում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. մշտապես հետևում և աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը
2. աջակցում է առողջապահական, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքապետարանի շենքի վերանորոգում. աշխատանքները ընթացքի մեջ են:

Համայնքի

14.08.2020

ղեկավար՝

X

